ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՍՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

15.01.2019թ.
Ժամը 13:30

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Վարդանյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ս. Վարդանյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու մասին:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.

(Ս. Վարդանյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 08.01.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ **<<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատելու մասին.
(Ս. Վարդանյան)

2.1 ՍՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին **<<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ն հրավերով** նախատեսված փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել համակարգի չաշխատելու պատճառով:

2.2 Հիմք ընդունելով Ֆինանսների նախարարության հայտարարությունը, այն մասին որ համակարգը 2019 թվականի հունվարի 11-ի ժամը 18:00-ից մինչև հունվարի 14-ի ժամը 13:00-ը չի գործել, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին համակարգի միջոցով տեղեկացնել **<<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 18.01.2019թ-ի ժամը 18:00 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
(Ս. Վարդանյան

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Ս. Վարդանյան)

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 21.01.2019թ.-ին ժամը 09:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան